

«ԿԵԱՆՔԻ ՀԱՆԴԵՊ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ»  
ԳԼԽԱԲՈՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐՏԻՆԱԼ ՌԱՃՐԻ ՄԱՅՈՆԻԻ

Շաբաթ, Յունուար 23ի երեկոյեան ժամը 6:00ին Լոս Անճելըսի մէջ գտնուող OUR LADY OF THE ANGELS Կաթոլիկ Տաճարին մէջ տեղի ունեցաւ յատուկ արարողութիւն մը, որ խորագրուած էր «Կեանքի Հանդէպ Պաշտամունք» որակումով:

Լոս Անճելըսի Կաթոլիկ Եկեղեցւոյ Արքեպիսկոպոսը՝ Կարտինալ Ռաճրի Մահոնի Սուրբ Պատարագ մատոյց իր շուրջը ունենալով թեմին եպիսկոպոսները եւ բազմաթիւ քահանաներ: Ներկայ էին նաեւ հիւր հոգեւորականներ:

Առաջնորդ Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգ. Տ. Տաճատ Ծ. Կրդ. Եարտըմեանի, Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Հայրապետեան եւ Բրշ. Յովնան Սրկ. Վարդանեանի, ներկայ գտնուեցաւ Կաթոլիկ Եկեղեցւոյ մէջ աւանդութիւն դարձած տարեկան այս արարողութեան: